

թիւնը աւելացնենք որ մենք կողմնակից ենք ժող. ներկայացուցչական մի պալատեան սիստէմին:

Մեզ համար միակ հեղինակութիւն՝ ղիաութիւնը կանգչի առնում և առաջ է ընթանում իր յաղթական զնացքի տակ խորտակելով ամեն տեսակի նախապաշարմունքներ և քարացած հայեացքներ: Մեզ ոգեւորող միակ զգացմունքը արդարութիւնն է, որով համակուել են արդէն առաջաւոր մարդկութեան մասսաները: Գիտութիւնը և արդարութիւնը ձեռք ձեռքի տուած ձգտում են վերանորոգել մարդկային կեանքը, իրագործելով նրա մէջ դեռ մեծ քաղաքացի Բուսսօից յայտարարած «հաւասարութիւն, եղբայրութիւն և ազատութիւն» յարդ մեծ մասամբ վերացական մնացած ըսկրզբունքները: Մենք հաւատում ենք որ մարդկային հանճարն և կորովը դուրս կը բերեն դեռ դասակարգային լաբիւրինթոսում դեզերող մարդկութիւնը մի նոր աշխարհ, ուր դարերի ընթացքում ամբողջ մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչները տանջանքներով և ջանքերով ստեղծուած քաղաքակրթական բարիքները սեփականութիւն կը լինեն բոլորի և ոչ մի խումբ բախտաւորների համար:

Դեկտ. 10-ին

Լ. Ս.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր շփոթ օրերում պարբերական հրատարակութիւնների կանոնաւոր լոյս տեսները կախուած չէ խմբագրութիւններից. հետևաբար, ինչպէս և կեանքի շատ ուրիշ դէպքերում, «անկախ պատճառները» մնում են զօրութեան մէջ: Անցեալ համարի (№ 10) ցենզուրական վեր-

Ղին թերթը ստացուած էր հոկտեմբերի 9-ին, համարը պատրաստ էր՝ ցրուելու համար՝ հոկտեմբերի 13-ին. յաջորդ օրը սկսուեց ընդհանուր քաղաքական գործադուլ. ընդհատուեց երկաթուղային հաղորդակցութիւնը և մենք անկարող եղանք դրսի բաժանորդներին ուղարկել այդ համարը մինչև հոկտեմբերի 25-ը: Ինչպէս յայտնի է այդ պատմական կարմիր օրերում լոյս չէին տեսնում և թերթերը: Տպարաններում սկսեցին աշխատել միայն հոկտեմբերի 25-ից: Այդ օրուանից սկսուեց շարուել ամսագրիս № 11, և մենք յոյս ունէինք դուրս բերել այդ համարը նոյեմբերի 20-ին. հէնց այդ պատճառով այդ համարում գետեղուած են մի քանի գրուածքներ (օր. Շանթի, Վամբերիի), որոնց վերջը պէտք է դուրս գար № 12-ում: Սակայն Գանձակի և Թիֆլիսի արիւնահեղ դէպքերը, 18-ից սկսած մինչև դեկտեմբերի սկզբները, ամեն բան տակն ու վրայ արան, դադարեցին աշխատելուց և զրաշարները: Երբ դեկտեմբերին վերսկսուեց աշխատանքը տպարանում մենք տեսանք որ անկարող ենք հասցնել № 12-ը մինչև յունուար ամիսը, մանաւանդ որ դեկտ-12 ից կրկին դադարեցին աշխատանքները տպարաներում, ընդ. քաղ. գործադուլի պատճառով, ուստի ստիպուած եղանք ստուարացնել և միասին հրատարակել երկու համարները: Որպէսզի 1906 թ. բաժա նորդները չզրկուեն յիշած գրուածքների սկզբից—մենք դրանց ևս կ'ուղարկենք այս №11—12-ը: Նրանք որոնք կը ցանկանան ունենալ «Հաջի-Բարայի» այն մասը, որ տպուած է 1905 թ. ընթացքում, պէտք է փոխադրեն 40 կոպէկ ճանապարհածախսի համար:

Ի դէպ նկատենք, որ անցեալ համարում յաւելուածի («Հաջ. Բար.») վերջին երեսի (144) վերջին տողերը սխալմամբ տպուած են առանց սրբագրութեան. այս համարում նորից տպուած է յիշուած երեսը՝ ուղղուած, հետևաբար պէտք է անցեալ (№ 10) համախ յաւելուածում կտրել վերջին թերթիկը (երես 143—144):

Անցեալ անգամ մենք յայտնել էինք որ Թիֆլիսի

պահեստներում «Մուրճ»-ի սովորական թուղթը սպառուած լինելով համարը տպում ենք այլ տեսակ թղթի վրայ: Երկաթուղիների գործադուլների պատճառով թուղթը չստացուեց և նոյեմբեր ամսում: Սպասում է այս օրերս:

«Մուրճ»-ի նոր Շրջանի հինգամեակը վերջացաւ բաւական խոշոր դեֆիցիտ թողնելով մեզ վրայ: Տարէցտարի աճելով բաժանորդների թիւը այս տարի հասաւ 980-ի և ոչ մեր ցանկացած 1200-ի: Ենթադրում ենք որ ջարդերը և երկրի շինթ դրուժիւնը մասամբ պատճառ եղան որ մաս-մաս վճարող բաժանորդներից շատ շատերը չլրացրին իրանց բաժանորդագները: Առհասարակ մեր հասարակութիւնը դեռևս լաւ չի ըմբռնում ամսագրի անհրաժեշտութիւնը. օրաթերթերը իրանց առօրեայ, թարմ, թուուցիկ լուրերով և տեղեկութիւններով միանդամայն գոհացում են տալիս նրա մտաւոր սակաւա, պետ պահանջներին: Մեր հասարակութիւնը, կարծես, դեռ չի հասկանում լրագրի և ամսագրի իրար լրացնող դերերը: Մինչդեռ պարբերական հրատարակութիւնների մէջ օրաթերթը, կարելի է ասած, կատարում է թեթև հեծելազօրքի և հրացանակիր վաշտերի դերը, իսկ ամսագիրը՝ թնդանօթածիզ բրիգադներին... Բռնութեան և խաւարի բերդերն վերցնելու համար պէտք է նախ հիմնաւոր ուժակոծութեամբ նախապատրաստել և ղիւրացնել շտուրմը... Ամսագիրը պէտք է տայ հիմնաւոր, բազմակողմանի և լուրջ սնունդ հասարակութեան մտքի և ճաշակի զարգացման համար. նա պիտի նպաստի ժողովրդի քաղաքական դաստիարակութեան. սակայն առանց նիւթական ապահովութեան անկարելի է ցանկալի կատարելութեամբ իրագործել այդ նպատակները...

Խմբագիր՝ Լ. Սարգսեան

Հրատ. արակիչներ Գ. Բանանեան

Լ. Սարգսեան: